

խողի և հաւատացած եղէ՛ք որ ձեր մտադրու-
թիւնը կը կատարվի: Ի հարկէ վերև դրված-
ները ինքն ըստ ինքեան մի մեծ նշանակութիւն
չունեն որ ես կամենայի խօսել երկարօրէն, բայց
ես ուրախ եմ լսելով որ իմ նամակը «Մշակի»
179 №-ում տպված, կարդացել են այնտեղ այն-
պիսի անձինք, որոնք գրականական լեզուին շատ
սովորաւ տեղեակ են. ուրախ եմ նրա համար որ
կարծում եմ թէ հրապարակական տեղերում լը-
րագիր կարդալը օգուտ կը բերէ լսողներին
մանաւանդ եթէ պատահեն հասկացողներ և
պարզեն նրանց կարդացածները իմաստը:

Յիշեալ սրճանոցներէ մինի մէջ կարդացել
էին, ինչպէս յիշեցի, իմ նամակը և սրճանոցից
դուրս եկողներէ մինը կանգնեցնում է իմ ծա-
նօթներէ մինին և հարցնում է՝ «պ. Ն, այստեղ
էլ գաղէթ կը տպեն, «հ», «պատասխանում է
ծանօթս—տպում են Թիֆլիսում և ուղարկում են
այստեղ:—Ինչի են այստեղ ուղարկում, դա լաւ
չէ, որովհետեւ այդ նամակում գրուած են գողու-
թիւններ և այլն:

Մերոնք առհասարակ այն համոզմունքի են,
որ մեր քաղաքում պատահած մի որ և իցէ խայ-
տառակ անցը հարկաւոր չէ պատմել և տեղե-
կացնել օտարաքաղաքացիներին, որովհետեւ ինչ
որ մերն է, այն լաւ է»:

Գողութիւնները առայժմ դադարվել են, որով-
հետեւ գիշերապահ զինուորային հետ ման են
գալիս իւրաքանչիւր գիշեր քանից աւելի բը-
նակներ, բայց դա ի հարկէ կարող է ժամա-
նակաւորապէս չարիքի առաջն առնել, դա մինչ
այն ժամանակ օգուտ կունենայ երբ կողպատող-
ները կը սպառեն արդէն գողացածները և երբ
քաղաքացիք կը բեզարեն հակելուց:—Մի անցը:
Անցեալ օր հաշտարար դատաստանատան մէջ իբրև
վկայ կանչուածներէ մինը—որը քահանայ է—
գործը վերջացնելուց յետոյ նշմարելով դրասեղա-
նի վրա մի գրիչ, սկսում է խնդրել դատաւորից
ընծայել նրան այն: Դատաւորը կատարում է
նրա խնդրքը:

Խ. Մառնակոզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Շրջակայ
գիւղերի մէջ յաճախ պատահում են կռիւները,
որոնց ժամանակ անաղին փայտեր են գործած-

տարված կը լինէր ըստ մեծի մասին դիմել
անբարոյական միջոցների, Եւ այս պատճառով
բարոյագիտական չկոչայի հիմնական կանոննե-
րից մէկն կայանում է նրանում, որ սահմանա-
փակէ ազատ մրցութիւնը: Բայց որպէս զի կա-
րելի լինէր կռել հաւասար գէնքով, և հերքել
հին չկոչայի սկզբունքները, նոր չկոչային պէտք
էր լաւ միջամուխ լինել որպէս տեսական,
նոյնպէս և գործնական բարոյագիտութեան (Ե-
THEA) ուղիղ և ամբողջական ուսումնասիրու-
թեան մէջ, և ստեղծել որ և իցէ ընդհանուր
առաջնորդող պրինցիպ, որը նրանց մօտ պա-
կաս է: Ինքը Լանգէ, որին կարելի է համարել
տնտեսագէտների բարոյագիտական չկոչայի կա-
րապետներից, մէկը, կարծես, օրօրվում է իր
համոզմունքի մէջ, յայտնելով հետեւեալ կաս-
կածները. «Որովհետեւ մենք արդէն բաւական
հասկացել ենք ետակարութեան ներգործութիւն-
ները, բայց բարոյականութեան հետեւնները
ընդհակառակն, չը գիտենք, ուրեմն մենք չենք
ստանայ բարեւոքված ժողովրդական տնտեսու-
թիւն, քանի որ չունենք բարոյականութեան
տեսութեան գիտական սկզբունքները, բայց և
այդ սկզբունքները մենք ունենալ չենք կարող,
առանց մեծ զարգացման տնտեսական գիտու-
թեան մէջ»:

Բայց քնչ է որ թողնում է բարոյագէտներին
տառապան մէջ, թող չը տալով նրանց ստեղ-
ծել մի որոշ գաղափար իրանց վարդապետու-
թեան մասին:—Հասարակական մակերեսովի
անհաւատարմութիւնը, որը հարթվում հա-
մար նրանք խիստ երկնդով են դիպչում:

Բարոյագիտականների գլխաւոր ներկայա-
ցուցիչներից մէկը, Շմոլլեր, բացարձակ խոստո-
վանվում է մրցութեան օգտաւէտ ներգործու-
թիւնը, գտնէ մի քանի դէպքերում, և մի և նոյն
ժամանակ, յայտնի սահմանների մէջ. Նա չէ
մերժում այն մրցողներին յաջողութիւնը, որոնք
յաջող են հանդիսանում իրանց իրիւր կրթութեան
և զարգացման շնորհիւ, բայց մերժում է դրա-
մատելներին հարստահարութիւնը և անհատների
արտօնական կամ ժառանգական դե-

վում կռուողները ուղարկութիւն չեն դարձնում,
որ մէկը գլուխն է կտրելով, միւսի քիթը ջարդ-
վում և այլն: Անցեալ օրերը Ախալքալաք եկել
էր Ե. գիւղից մի մարդ. որի երկու որդոց ծե-
ծել էին. մէկը գլուխն էին կտրել, իսկ միւսի
աչքը վերաւորել: Այդ կռիւն մասնակցել են և
կանայք»:

«Մեր քաղաքացիներից մէկը, գրում է ԱՆԱԼ-
ՔԱԼԱՔԻ Թղթակիցը, անցեալ օրը դուրս է ա-
նում իր կնոջը, որը գիւղերը իր մի ազգականի
մօտ պատասպարվում է: Միւս օրը այդ ազգա-
կանը ստիպում է կնոջը գնալ իր ամուսնի մօտ,
նա վերադառնում է տուն և տեսնելով որ
դուները փակված են, նստում է դուրսը մի քա-
րի վրա, Այդ դրութեան մէջ կինը քաղցած մը-
նում է մինչև երեկոյ. Երբ ամուսինը նրան տես-
նում է դարձեալ դուրս է անում: Այդ կինը
այժմ ապրում է իր մարդու ազգականի մօտ:
Ժողովուրդի մէջ շատ դատապարտելի կերպով
պատմում են, որ խեղճ կնոջը հալածող ամու-
սինը շատ մօտ յարաբերութիւններ ունի իր ազ-
գականներից մէկի կնոջ հետ»:

Լսում ենք, որ նոյեմբերի 12-ին պ. Մ. Ամ-
բիկեան Ներսիսեան գլորոցի հին դահլիճում մի
ներկայացում կը Դաւայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅՏԵՐԻՑ ՄԱՐԿԻՃ ՍԱ-
ԼԻՍԲԵՐԻՒՆ ՆԵՐԱՅԱՅՈՒՅՐԱԾ ՈՒՆԵՐՁԻ ՄԱ-
ՍԻՆ

Մեր նախորդ թիւով ծանուցեր էինք թէ
Գեր. Մկրեան Տէր Յովհաննէս քահանայի
Լորտ Սաղկալըրի ներկայանալով ուղերձ մը
մատուցեր է: Մեծարգոյ Կ. Յակոբեան իբրև
Թարգման ներկայ էր և ուղերձը կարդաց,
որ Անգղիա բնակող 65 հայազգեաց ստորա-
գրութիւնը կը կրէր: Ուղերձին պատճէնը
Տէյլն Նիւզը մէջ հրատարակուած կը տես-
նենք, և կը փութանք պարունակութիւնը
ծանուցանել: Ուղերձն ստորագրողը կը խնդ-

րազանցութիւնները, որոնցով նրանք ճշուած են
այս ստացականի առանձնանորոշութիւններից
գործի եղողներին: «Ես միշտ պատրաստ եմ
պաշտպանել կրթութեան նախապատուութիւնը—
ասում է նա—բայց ոչ քսակի և ծնունդի ար-
արտօնութիւնները»:

Մի հայեացք որ մասամբ համաձայն է Շմոլ-
լերի հետ, դեռ նրանից առաջ յայտնել էր Կ-
րեկի հասարակական գործիչ Բիւլիներ, միայն
աւելի որոշակեալով: Նա համարում է աներկա-
կայելի ոչնչացնել մրցութիւնը գոյութեան կռի-
ւի մէջ և այս պատճառով հարց է բարձրաց-
նում միջոցների հաւասարութեան մասին, այ-
սինքն որ մրցողները ունենային համեմատ գէ-
շեր կռելու համար: «Թող գտնեն մի ֆորմու-
լա (մակագրութիւն)—ասում է նա—որը ոչնչա-
ցնէր, կամ գտնէ մի յայտնի աստիճան փոք-
րացնէր ընկերական մրցութեան անհասարակու-
թիւնը գոյութեան կռիւի մէջ. —այն ժամանակ
թէ հասարակական, և թէ մշակների հարցերը
կը լինէին, եթէ ոչ կատարելապէս, գտնէ մաս-
նաւորապէս միջոցով:—«Այսպիսով մի ֆորմու-
լա գտնված է, —չարունակում է նա—մենք ոչ
մի պատճառ չունենք նրան թաղանթել, որով-
հետեւ նա ըզմանդակում է իր մէջ յարմարուր
միջոց, որը չէ խանգարում ոչ քրի անձնական
չափերը, և ուղղակի չէ հակառակում այժմեան
եղած պայմաններին, ի վերաջայտ ամենայնի,
մի միջոց, որ իր հետեւիտէ գորանալով կը
լինի միշտ աւելի ետական, որը բաւական թեթեա-
ցնում է չքաւորներին, ուղղակի չը վնասելով
ունեւորներին, և այս պատճառով, —այն միջոցը,
որը կարելի եղածին չափ հարթացնում է հաս-
արակական անհասարակութիւնները, և ոչ թէ
ընթացնում է, այլ ընդհակառակն, զորացնում է
և զրգիւն է տալիս դէպի մրցութիւն, և որ տա-
նում է դէպի այն ամենը, որ բարձր է: Այդ
միջոցը կայանում է մի իր ֆօրմիլ մէջ, կամ
սակաւ առ սակաւ, բայց միջոց է հետեւ
հետեւ և ճշող վերանորոգութեան
մէջ ժառանգական դեպքերի և իրաւունքի օ-
գուտը ընդհանուր իր»:

Լորտ Սաղկալըրին, որպէս զի իրենց
խնդակցութեան զգացումն յայտնէ Թարգ-
ման կառավարութեան Անգլո—Թուրքական
զաշնադրութեան վրա, որոյ վախճանն ազ-
գային բարոյութիւնն պիտի ըլլայ, կը տեսն
Հայերն ամեն ազգերէ աւելի ուրախ կըլլան
Փոքր Ասիոյ վրա Անգղիական պաշտպանու-
թիւնը տարածվելուն համար: Հայք այն ա-
ւերեալ երկիրներուն ամենէն կարեւոր քրիս-
տոնեայ տարրն են, որ ներկայ հարստա-
հարութիւններէն և շրջակայ ցեղերու յար-
ձակումներէն ամենէն աւելի վնասուած են:

Ուղերձին հեղինակները կը յուսան սակայն
թէ իրենց հայրենի երկրին համար բարո-
ւութեան նոր դար մը կրնայ բացուիլ, քանզի
Բ. Դուռը պարագայից ստիպման ներքեւ յա-
նձն առաւ բարենորոգումներ ի գործ դնել:
Անգղիա ևս պատասխանատուութիւն առաւ
իր վրայ այն բարենորոգումները գործադրել
տալու համար: Յունիս և ի դաշնադրութիւ-
նին ոսկեղինիկ կապ մ'է Արեւելք և Արեւ-
մայց մէջ, ուրիշ Հայք կենսական օգուտներ
կրնան սպասել: Բայց ուղերձին հեղինակները
կարծիք կը յայտնեն թէ Թուրքիայի անկարող
է ինքիւմ գործադրել այն բարենորոգու-
մներն, առանց Բրիտանական կառավարու-
թեան միջամտութեան: Անցեալ աղետալ
պատերազմէն ետեւ Թուրքիա դանձային և
ուրիշ կարողութեանց մասին մեծ կորուստ-
ներ տուաւ, ուստի ուղերձին հեղինակները
չեն կրնար հաւատայ առաջարկեալ բարե-
նորոգմանց իրականութեան եթէ Անգղիա չա-
րունակ իւր նիւթական և բարոյական ազ-
դեցութիւնն ի գործ չը դնէ, և բարենորոգ-
մանց վրայ չը հսկէ:

Մասնաւորապէս Հայաստանի բարենորոգ-
մանց գաղով, կը խնդրեն որ Կ. Պօլսոյ դե-
պանին հրահանգ տրուի Հայոց Պատրիարքին
հետ ստեպ խորհրդակցելու, և մեր դժբաղդ
ազգայնոց պիտոյից վրայ անկէ տեղեկութիւն
ընդունելու, որով դեպքանին գործն ալ մե-
ծապէս կը դիւրանայ, և դանգաժտեալ ցաւոց

իմաստը բաւական պարզ է. Բիւլիներ մերժում է
մրցութեան մէջ արտօնական անհասարակութիւ-
նը: Այսու ամենայնիւ, մարդկութիւնը գրանով չէր
կարող հաւասարվել. Երպէս պէտք էր հաշտեց-
նել բնական կատարելութիւնները, որ անհատ-
ների մէջ տարբեր են, և վերջապէս այն անհա-
ւասարութիւնները, որ յառաջ է բերում կրթու-
թիւնը, զարգացումը:

Այսպէս է նաեւ այդ հարցի վրա Ալօլֆ
Վալդեմը. «ձգարիտ է—ասում է նա—որ մար-
դիկ բնութիւնից անհասարար են, և թէ անձ-
նական կամ անհատական անհասարարութիւնը
որպէս մի և նոյն սեւեռ կամ տեսակի ներկայա-
ցուցիչների մէջ, այնպէս էլ մարդու մէջ է բը-
նութեան օրէնքը: Այստեղից պէտք է զուրս
բերել մարդու վերաբերութեամբ մի անհրաժեշ-
տութիւն, ցանկանալով յաղթութիւն այն ան-
հատներին միայն, որոնք աւելի ձիւրք ունեն
բնութիւնից: Եւ այդ պնդում եմ այն հիման
վրա, որ մարդիկ մէջ գտնէ մասամբ, կարելի է
հաւասարել այդ բնական անհասարարութիւնը
ուսման և կրթութեան միջոցով, և այն պահպա-
նութեան միջոցով, որը հասարակութիւնը կա-
րող է և պէտք է որ ցոյց տայ իր տկար ան-
դամներին: Անհատների բնական անհասարարու-
թիւնը ներկայացնում է և այն պահանջմունքը,
որ հասարակութեան բոլոր տարրերը անխոր-
կեպով չեն թաղկվէին մրցութեան, և որ տկար-
ները գոհ չը տրվէին նրան»:

Բոլորովին ուրիշ կերպ ամոսում է Մառ-
լուրը. «Հակառակ սօցիալական կարծիքների,
որ ձգտում են ոչնչացնել ամեն տեսակ մրցու-
թիւն և առհասարակ մերժել զրամատելների
գործողութիւնները,—ասում է նա—մենք, բուր-
ժուական տնտեսութեան հետ, համարում ենք
մրցութիւնը մի տնտեսական անհրաժեշտութիւն,
և մտածում ենք, թէ սխալ կը լինէր զրկել հա-
սարակութիւնը այդ տնտեսական գործիւն
օգուտներից, և փոխել նրան տնտեսական գոր-
ծողութեան մի ուրիշ կազմակերպութեամբ, որով-
հետեւ մրցութիւնը ուղղակի արդիւնք է աշխա-
տանքի և մարդկային ինքնասիրութեան»:

Հարման կը տարուի Հայք Կ. Պօլսոյ և դա-
ւառաց մէջ մեծ փորձառութեան տէր
մարդիկ ունին, և եթէ արդարութիւնն ի
գործ պիտի դրուի, պէտք է որ անոնցմէ ո-
մանք բարձր պաշտօններու կոչուին երկրին
վարչութեան մէջ: Անգղիոյ պաշտպանութեան
ներքեւ Հայ ժողովուրդն եթէ քաղաքական և
գիտութեան հաւատարմութիւն վայելէ, կըր-
նայ իւր կենսին ու ստացուածքը պաշտպա-
նել Ռեզակայ ցեղերու յարձակմանց դէմ:
Եւրոպական գաղափարաց ազդեցութեան շը-
նորհիւ Հայաստան կրնայ կերպարանափոխիլ
և Մեծն Բրիտանիա կարեւոր օժանդակու-
թիւն մը կստանայ իր բարենորոգիչ գործին
մէջ: Թուրքիա ալ իւր արեւմտեան սահմանին
վրայ գոհ ժողովուրդ մ'ունենալով, իրենց
տուններն ու օրէնքները պաշտպանելու պատ-
րաստ, աւելի զօրաւոր պատենէ մը կանգնած
կըլինի: Վերջապէս ուղերձին հեղինակները
կը հերքեն Հայոց վրայ եղած այն ամբաստա-
նութիւնն իբր թէ անոնց ինքնավար-
չութիւնն տալը վտանգաւոր է: Հայք ի-
րենց երկրին և կառավարութեան հաւա-
տարիմ մնացած են, և այս հաւատարմու-
թիւնն իսկ շատ անգամ պատճառ ե-
ղած է իրենց աղետից: Բ. Դուռը գիտ-
նալով Հայոց հաւատարմութիւնը, բնաւ կաս-
կած ունեցած չէ անոնց ապստամբութեան
վրայ:

Լորտ Սաղկալըրի այս ուղերձին կարեւորու-
թիւնը ճանաչելով, արժան եղածն ի գործ
դնելու խոստում տուած է:

Ուղերձին հեղինակներն Հայկական դատին
մեծ ծառայութիւն մ'ըրած են, և այս
պատճառաւ Հնորհակալաց արժանի են: Ի-
րենց յայտնած կարծեաց մեծ մասն ամեն
Հայ համամիտ է, սակայն եթէ նոքա Անգլո-
Թուրքական դաշնադրութեան վրայ չափա-
զանց խանդով կը խօսին Անգղիացի նախարա-
րի մ'առջև, մենք ալ Թուրքիոյ բարենորո-
գումները գործադրելու կարողութեան մասին
չենք կրնար այնչափ յառաջ երթալ քանզի

թեան պայմանների անհասարարութիւնը Մառ-
լուրը գտնում է, ուրիշ շատ տնտեսագէտների
նման, բնական անհասարարութեան մէջ, և որի
պատճառով ոչնչացնել նիւթական անհասարա-
րութիւնը մարդկային հասարակութեան մէջ ան-
հար է համարում: «Մարդկանց մէջ նիւթական
հասարարութիւն հաստատելու ձգտումը—ասում
է նա—միշտ կը մնայ խզուր, որովհետեւ նա կը
խորտակի մարդկային բնութեան անհատական
տարբերութիւնների պատճառով: Այդ ժպուի
վրա խորտակվեցան և խորտակվում են բոլոր
աշխատութիւնները, մինչև անգամ խիստ տա-
ղանդաւոր սիստեմաների, որոնք հիմնված էին
նիւթական հաւասարութեան վրա և սեփականութե-
ան ընդհանուր (հասարակաց) լինելու վրա»:

Վերջիջեալ գաղափարութիւնը կարելի է
երեք մաս բաժանել: Առաջին մասին վերաբը-
րում են այն գիտականների կարծիքները, որոնք
ընդունում են, թէ գոյութեան կռիւը մի երեւոյթ
է, որ չափազանց խորին կերպով դրված է մար-
դու բնութեան մէջ, և այս պատճառով անհար է
հեռացնել նրան: Եւ ի նկատի ունենալով այդ,
նրանք ձգտում են հարթել բոլոր խոչընդոտները
և հարկադրել, որ մրցութիւնը մասին իր բնական
ընթացքի մէջ: Հայեցողական այդ կէտից, նը-
րանք պախարակում են այն մրցութիւնը, որի
մէջ յաղթութեան յաջողութիւնը կախված է վի-
նում որ և իցէ արտօնական կամ ժառան-
գական առանձնաշնորհութիւնից և կամ դրա-
մատելներն ի հարստահարութիւնից. օրինակ,
մի հարուստ, թէ և յիմար, յաղթում է մի աղքա-
տին, որ նրանից հազարապատիկ աւելի խելօք և
ձիւրքով էր. և կամ մի տաղանդաւոր մշակ սը-
տիպված է լինում օրական հացի համար աշխա-
տել մի կալուածատիրոջ հողերի վրա և իր վի-
ճակը բոլորովին դնել նրա կամայականութեան
ներքոյ: Կրանք համարում են մրցութիւնը իրա-
ւացի այն մարդերի մէջ, որոնք հաւասար են
իրանց հասարակական դրութեամբ: Եւ իրանց
նիւթական կարողութեամբ, թէ և նրանք տար-
բեր կը լինեն իրանց բնական ընդունակու-
թիւնների աստիճանով:

Եթէ իրօք թուրքիս անկարող լինի զանոնք գործարարելու, ցաւալի է խոստովանիլ թէ օտար և հեռաւոր պաշտպանութեան մը վրայ այնչափ յոյս չը կրնար դրուիլ այլ բարենորոգմանց յաջողութիւնը մեծ մասամբ թուրքիոյ անկեղծ աջակցութենէն կախումն ունի: Առ այժմ, Ալաշկերտի և Պայազլի տեւրեալ վիճակը, Հայաստանի մէջ տիրած անապահովութիւնը, և բարենորոգմանց երկարաձգումը մեր ազգայնոց սկիզբակիականութիւնն աւելցնելու կը ծառայեն:

Իսկ Ռուսաստան զաղծող ազգայնոց դաւլի, Մէմֆիսի Տիբլումից կը ծանուցանէ թէ: ասոնք թուրքիայէն առնուած Հայաստանի բաժնին մէջ կանոնադրապէս կը տեղաւորին, և Կովկասեան Հայք Զարէն արտօնութիւն կը խնդրեն Բագրատունեաց Անի մայրաքաղաքը վերականգնելու՝ նոր Անի անուամբ:

ՖՐԱՆՍԻԱ

«ГОЛОСЪ» լրագրի Փարիզի թղթակիցը գրում է հետևեալը:

Հոկտեմբերի 27-ին ամբողջ Ֆրանսիայում ենաօր պատգամաւորները ընտրութիւնը կատարվում է: Իրանք պէտք է ընտրեն սենատորներին: Բոլոր կուսակցութիւնները եռանդոտ պատրաստութիւններ են տեսել: Միապետականների անհամաձայնութիւնը բաւական նշանակաւ ցուցանում է Օրինականները, բռնապետականները և օրէնսդատները ամեն անգամ միմեանցից անբաւական էին լինում, երբ պէտքէ կանգնեցան ընտրելին, այնպէս որ շատ տեղերում, ուր միապետականների յաղթութիւնը անկասկած էր համարվում, հանրապետականներ կը ընտրվեն:

Վեց կամ եօթ օրից առաջ չէ կարելի գուշակել ընտրութիւնների հետևանքները, որովհետև ընտրվող պատգամաւորների անունները այնքան անյայտ են, որ չէ կարելի տեսլ թէ ինչ ուղղութեամբ նորա կը գործեն սենատորների ընտրութեան ժամանակ: Վերապայտում պատրաստվում են բացանել ազ-

գային ժողովի նիստերը: Մի քանի շաբաթ արանից առաջ Գամբետտա հաստատ ցանկանում էր, որ ազգային ժողովի նիստերը բուն գործնական լինեն, այսինքն որ ժողովը ընէ 1879 թուականի ընդգծելու և չը պարապի ընդհանուր քաղաքական հարցերով, բայց շատ կասկածելի է, որ այլ ցանկութիւնը կատարվի, վերջին ժամանակներում այնքան նիւթ է հաւաքվել որ ժողովը բաւականին շատ ազմակից նիստեր կունենայ:

Հետևանքաւոր է, որ թշնամական գործողութիւնները այս անգամ սենատի մէջ կը սկսվեն: Այն սենատորները, որոնք յունվարին ընտրութիւնների պէտք է ելնարկվին, օրինում հաստատ տեղեկութիւն կը ստանան իրանց սպասող վիճակի մասին: Ինչ տեսակ էլ լինի այդ վիճակը, հաստատացած կը լինեն, թէ չեն լինի, որ նորից կը ընտրվեն, այնու ամենայնիւ նորա կաշխատեն որքան կարելի է շատ անբաւականութիւն պատճառել միևնույնութեանը: Եթէ նորա ստիպված կը լինեն հեռանալ քաղաքական ասպարիզից, ոչ մի միջոց չեն թողնի վրէժխնդիր լինելու հանրապետականներից իրանց անկման համար: Հակառակ դէպքում կաշխատեն որ և է ծառով կամ առաջարկութեամբ յիշեցնել ընտրողներին իրանց գոյութեան մասին:

Պէտք է խմբաւոր, որ Ֆրանսիացի ընտրողները չեն սիրում ազգային ժողովի կամ սենատի համար անդամներին: Իւրաքանչիւր ընտրող պարծնում է իր ընտրած անդամի ունեցած նշանակութեամբ: Ընտրողը պարծնում է իր ընտրած անդամի ծառով, կատարած գործերով և այլն, կարծես ինքն էլ դրանց մասնակից լինի: Մի քանի նահանգներում ընտրողները չեն բաւականանում ժողովի անդամի ծառարարութեամբ, այլ կամենում են որ նրա ազգանունը անդադար ուղղված լինի «Journal Officiel» լրագրի մէջ իբրև մի անդամի որ յայտնի է անդադար ընդհարումներով, յանդիմութեամբ և այլն:

միշտ աւելի և աւելի դարգանան, — նրանց մէջ և չար երբ:

Այդ առիթ տուց բարոյագէտներին հիմնել իրանց վարդապետութիւնը, որոնց մենք մեր երրորդ բաժանման ենք վերաբերում: Իրանք թէ և խոստովանում են, թէ մրցութիւնը գոյութեան կռիւի մէջ անհրաժեշտ է, բայց չեն ընդունում ազատ մրցութիւն մարզերի մէջ, որոնք տարբեր ձևերով պարզված են բնութիւնից: Իրանք հակառակ են բնական անհատաբարութեանը, և պաշտպանում են կրթութիւնը որպէս միջոց բնական տարբերութիւնները հարթելու համար: Իրանք պահանջում են, որ կրթութիւնը հնար տար բնութիւնից տկարին մրցելու իր աւելի զօրեղ անոյեանի հետ, և այս պատճառով առաջարկում են զարգացնել բարոյականութիւնը, որպէս մարդկային զգացմունքները ազնուացնող միջոց, և զարգացնել խելքը ուսման միջոցով: Բացի դրանցից առաջարկում են ընդարձակել տկարներին պահպանելու նպատակով կազմված բարեգործական հիմնարկութիւնները:

Թէ որպիսի աննշան դեր է կատարում բարոյականութիւնը գոյութեան կռիւի մէջ, այդ մենք տեսնում Սլոնիների նկատողութիւններից վաճառականների բարոյականութեան վերաբերութեամբ: Բայց որպէս զի բարեգործութիւնը լինի մեր առաքինութեան մեծ և անընդհատ շարժառիթը, և որպէս զի այդ գաղափարը լինի մեր վարքի անկախութիւնը, հարկաւոր էր, որ մենք կատարելապէս ծանօթ լինէինք նրա պատճառների և նրանից յառաջ եկած հետևանքների հետ: Բարեգործութիւնը այն ժամանակ միայն կարող է նպատակաւորաբար լինել, երբ մարդ նոյն բարեգործութեան մէջ գտնում է և իր անձնական բարին: Ես օգնելով իմ դրացուն, օգնում եմ և ինձ, որովհետև նրա չքաւորութիւնից ես կարող եմ փաստել: Այդ դրութիւնը արդարաւորապէս է բազմաթիւ օրինակներով, որ շատ գործեր, որոնց հիմքի մէջ դրած էր բարութեան խիստ ջերմ ցանկութիւն, փաստաբար հետեւանքների են հասնում, երբ շարժառիթը լինում է

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յունական լրագրիներից մէկին գրում են Կարգիցայից, որ թիւրքերը մօտ 200 ընտանիքներ արտաքսեցին այս քաղաքից, որոնց տները զօրանոցներ, պահեստներ և հիւանդանոցներ փոխարկեցին: Թիւրքաց զօրքերի առողջապահական գրութիւնը շատ թշուառ վիճակի մէջ է: Նրանք սպառված են ազգատուներից և հիւանդներից: Մի և նոյն գանդառները կրկնվում են ֆարսալում և Ալիքիում:

— «Wiener-Tagblatt» լրագրին Ադրիանօպոլից գրում են հոկտեմբերի 28-ին հետեւեալը. «Գերմանացի Տօթլէքէն հրամայեց յայտնել Բ. Իւրան, որ նա պատերազմական կէտից նայելով խիստ ընդգծէ թիւրքաց զօրքերի Մակեդոնիայում գետնազննումը: Դէմ, որովհետև նրանք սպառնում են ռուսաց զօրքի թիւին Արևելեան Ռումելիայում: Գերմանացի կրկնվէ հրաման ստացաւ նորից կազմակերպել հազարակոթութիւնը Ռումելիայում մինչև Չատալի: Ռուսները Ռումելիայում ամեն տեղ պատրաստվում են երկար ժամանակվայ գրաւման համար:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, հոկտեմբերի 30-ին: «ГОЛОСЪ» լրագրին Պէշտից հաղորդում են: Այստեղ լուր հասաւ Սեւասկից, որ բօնիացի ապստամբ փախտականներին բռնի կերպով ժամագրման ձեռքով յետ են դարձնում իրենց հայրենիքը, կայանաւորում են նրանց գիշեր ժամանակ և չը թող տալով պատրաստվել ճանապարհին: Այս տեսակ միջոցներով ամբողջ ընտանիքների անդամները միմեանցից անջատվում են: Սաստիկ ցուրտերը և անանցնելի ճանապարհները անտանելի են դարձնում գաղթականների դրութիւնը: Սարանվօյց գրում են որ աւարիական զօրքի մէջ ցուրտի, վատ բնակարանների, վրանների պակասութեան և ուտելիքների հացանքի անկարելութեան պատճառով զարգա-

լով բարիք գործել: Յայտնի է, թէ որպէս շատ անգամ բարեգործութիւնը, փոխանակ թեթեւացնելու մարդկային տանջանքները, տանում է դէպի մոլորութիւն և դէպի չարութեան արմատանալը: Այդ կէտից, շատ հասկանալի է, թէ որքան խախտում հիմքերի վրա է կայանում բարոյագէտների (ЭТНԻԿԵՐ) վարդապետութիւնը: Այդ հանգամանքը ինկատի ունենալով, Բօկլը հասաւ, ըստ երևոյթի, մի այնպիսի տարապայման եզրակացութեան, թէ «տկարացնելով առաքինութիւնը, դուք կարգելեք չարութիւնը, և յօրինեց իր երեւելի վարդապետութիւնը բարոյականութեան նշանակութիւնը չունենալու մասին պատմական զարգացման գործի մէջ: Իսկ ինչ որ վերաբերում է բարեգործական հիմնարկութիւններին տկարների խնամատարութեան մասին, մենք կը բերենք մի երեւելի մարդու կարծիքը:

«Այսինքնների մէջ — ասում է Դարվիլը — մարմնով և հոգով տկարներին ոչնչացնում են և կենդանի մնացածները լինում են առհասարակ պարզեկված ամուր առողջութեամբ: Մենք, քաղաքակրթված ազգերս, գործ ենք դնում մեր բոլոր կարողութիւնը, որ արդենք ոչնչացնելու այդ գործողութիւնը: Մենք հիմնում ենք օթեւաններ տկարախելների, հաշմանդամների և հիւանդների համար: մենք հրատարակում ենք օրէնքներ յօգուտ աղքատների, և մեր բժիշկները գործ են դնում իրանց բոլոր հմտութիւնը, որ երկարացնեն իւրաքանչիւրի կեանքը մինչև վերջին կարելութիւնը: Անհիմն չէ այդ կարծիքը, որ ծաղիկ պատուաւորութեամբ պահպանեց հազարաւոր մարդիկ, որոնք, իրանց տկար կազմուածքի պատճառով, առաջուց պիտի մոռնէին ծաղիկը: Այսպիսով, և քաղաքակրթված ժողովրդի տկար անդամները տարածում են իրանց սեռը: Ոչ մի մարդ, որ ծանօթ է ընտանի կանստներ բազմացնելու օրէնքներին, չէ կարող ունենալ ամենափոքր տարակուսանք այն բանի մէջ, որ այդ հանգամանքը չափազանց փաստաբար է մարդկային ցեղին: Մեզ զարմացնում է, թէ վատ հոգատարութիւնը կամ անկանոն պահպա-

նում են զանազան հիւանդութիւններ: Ասում են որ շուտով գալու է Պէշտ Բօնիայից այդ նահանգի բոլոր գաւառներին: Ների բնակիչների կողմից մի պատգամաւորութիւն, Աւստրո-Ունգարիային մի խնդրագիր ներկայացնելու նպատակով, որպէսզի Բօնիա նահանգը միանայ աւստրիական պետութեանը: Ընդդիմադիր լրագրիների թղթակիցները հաւատացնում են, որ երբ թէ այդ պատգամաւորութիւնը կազմված է մասամբ տեւրութեան վարձված մարդիկներից, իսկ մասամբ տեւրութեան հրամանով: Լօրդ Բիկնոն-Ֆիլլի վերջին ծառի անբովանդակ լինելը անաջող տպագրութիւն է գործել Պէշտի մէջ: Ամենքը սպասում էին որ ծառը կը լինի եռանդոտ և Ռուսաստանին թշնամական և դա շատ յարմար կը լինէր աւստրիական կառավարութեանը զեկեզացիաներին աւելի դիւրութեամբ մոլորացնելու համար:

Վիեննա, 30 հոկտեմբերի (11 նոյեմբերի): «Polit. Correspondenz» լրագիրը հաղորդում է. «Բ. Դուռը տեղեկութիւն ստացաւ Սերեսից, որ Մակեդոնիայում բոլորները յարձակվեցան Կրանայի վրա և շրջապատեցին այնտեղ եղած երկու բառալեզ թիւրքաց կանստներ զօրքերը, որոնք երեսուն ժամ տեղը կռից յետոյ գերի են առած և ուղարկված են Հարբիլ: Բոլորացի ապստամբները յարձակվեցին Զէնիկէսի և Իրաքլանիցայի վրա: Նուա գրաւեցին Բրեսնիցա, Մօրնա, Պօշմա և Խինեցա մահմադական գեղերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 95⁵/₈ ռ., երրորդ 95 ռ. 50 կ., չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 234 ռ., երկրորդ 228 ռ., արեւելեան 92 ռ., ոսկի 8 ռ. 38 կ.: Ռուսաց 1 ռուբլ. Լօն. դօնի վրա արժէ 23⁴/₃₂ պէնս, ռուսաց 100 ռուբլ. Գերմանիայի վրա արժէ 201 արկ, Փարիզի վրա 247 Ֆր. 50 սանտ.: Տրամադրութիւնը թող է:

նութիւնը՝ մինչև որ աստիճան սաստիկ կերպով պատճառում է ընտանի անասունների տեսակի դէպի վատը փոխվելը: Եւ բացի այն դէպքից, որ վերաբերում է մարդուն միայն, հազիւ թէ կը գտնուէր մի այնքան տխմար անասնապահ, որ թող տար վատ անասունների բազմաշաւունս՝ «Հետեւելով առողջ մտածութեան ձայնին», — աւելացնում է նա — մենք չէինք կարող թաղցնել մեր համակրութիւնը, առանց ոչնչացնելու մեր բնաւորութեան ամենաազնիւ յատկութիւնները... և մենք զէջք է անտարուսնը համբերելու տկարների թանկու և բազմաշաւունս կանկալած — փաստաբար հետեւանքներին:

Բոլորը, ինչ որ խօսվեցաւ մինչև հիմայ, ծառայում է որպէս ապացոյց երեւան հանելու այն անհամաձայնութիւնը, որ տիրում է գոյութեան կռիւի մէջ — անհամաձայնութիւնը, յաղթութիւն վաստակելու փափագի մէջ մէկ կողմից, և բարոյական ճգնաժամներին ընդարձակ բաւականութիւն տալու մէջ միւս կողմից: Առանձին անհատի և նրա հետ սերտ կերպով կապված մի փոքրիկ խումբի, այսինքն մի ազգի շահերի չօչափումը և շփոթութիւնը յառաջացնում են զլիւսաւոր պատճառները այն անհամաձայնութեան, որ գործնական կեանքի մէջ այդ շահերը հեռացնում են բոլոր ուրիշները, — այսինքն մեծ խումբերի կամ ընդհանուր մարդկութեան շահերը: Եւ այս պատճառով, ընդհանուր մարդկային բարին (այսինքն բարձր բարոյական ճգնաժամները նպատակը) հանդիսանում է որպէս մի խնդիր, չափազանց բաղադրեալ, և անիրագործելի: Ահա ինչու ամեն մի թէօրիա, որ հիմնված է լինում մի անձի, ընտանիքի և մի ազգի նեղ շահերի վրա, ունի աւելի շատ հաւանականութիւն յաջողութիւն գտնելու գործնական կեանքում, քան թէ մի թէօրիա, որ ստեղծված է բարոյագիտական սկզբունքների վրա և ծառայում է ընդհանուր մարդկային համաշխարհական օգնականին:

(Կը շարունակվի)

